Համաշխարհային բանկի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2013» ինդեքս

2012թ. հոկտեմբերի 23-ին Համաշխարհային բանկը և Միջազգային ֆինանսական կորպորացիան հրապարակել են իրենց ամենամյա «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2013» հետազոտությունը, որում ուսումնասիրվել և գնահատվել է աշխարհի 185 երկրներում գործարար միջավայրը և գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը: Այս հետազոտության նպատակն է վերլուծել տնտեսական գործունեության կենսապարբերաշրջանին (life cycles) վերաբերող կանոնակարգերը և բացահայտել աշխարհի տարբեր երկրներում գործարար միջավայրը կարգավորող այն ոլորտները, որտեղ առկա են գործարարության իրականացման լուրջ խոչընդոտներ, և անհրաժեշտ են լուրջ բարեփոխումներ:

Նշենք, որ գործարարությամբ զբաղվելու դյուրինությամբ աշխարհի 185 տնտեսությունների **առաջին տասնյակում** են Սինգապուրը, Հոնկոնգը, Նոր Զելանդիան, ԱՄՆ-ը, Դանիան, Նորվեգիան, Մեծ Բրիտանիան, Կորեան, Վրաստանը և Ավստրալիան, իսկ **վերջին տասնյակում** են՝ Նիգերը, Կոտ դ՛Իվուարը, Գվինեան, Գվինեա-Բիսաուն, Վենեսուելան, Կոնգոյի Ժողովրդական Հանրապետությունը, Էրիթրեան, Կոնգոն, Չադը և Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը:

«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2013» հետազոտության մեջ ուսումնասիրվել են գործարար միջավայրի կարգավորման տասը ոլորտներ՝ ***գործարարություն սկսելը (գրանցելը), շինարարական թույլտվությունների ստացումը, էլեկտրականության հասանելիությունը, սեփականության գրանցումը, վարկի ստացումը, ներդրողների պաշտպանվածությունը, հարկերի վճարումը, սահմանային առևտրի դյուրինությունը, պայմանագրերի կիրարկումը, անվճարունակության պարտառով լուծարումը:*** Նշված ոլորտների համար հաշվարկվել են առանձին ենթաինդեքսներ, որոնց պարզ թվաբանական միջինը կազմում է ***«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը»*** ամփոփ ինդեքսը տվյալ երկրի համար: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2013» հետազոտության մեջ օգտագործվել են 2011 թ. հունիս - 2012 թ. հունիս ժամանակահատվածի տվյալները, բացառությամբ «Հարկերի վճարում» ոլորտի ցուցանիշների, որոնք ներառում են 2011թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածը:

Ենթաինդեքսների հաշվարկման համար հիմք է հանդիսանում հարցումների միջոցով ստացված տեղեկատվությունը, որը, անհրաժեշտության դեպքում, ճշգրտվում է համապատասխան ոլորտը կարգավորող օրենքների կամ օրենսդրական ակտերի դրույթների հիման վրա: Ընդ որում՝ հարցումների համար անհրաժեշտ հարցաթերթիկները կազմվում են Համաշխարհային բանկի փորձագետների կողմից՝ երկրների գործարար միջավայրը կարգավորող օրենսդրական դաշտը ուսումնասիրելուց հետո:

Վերոնշյալ տասը ոլորտներից յուրաքանչյուրի գնահատման համար կիրառվում է առանձին մեթոդաբանություն, օրինակ «Սեփականության գրանցման» ինդեքսը գնահատելու համար ուսումնասիրվում է որոշակի գործունեությամբ զբաղվող, որոշակի մեծության ձեռնարկության կողմից որոշակի սեփականություն ձեռք բերելու գործընթացը, իսկ «Ներդրողների պաշտպանվածության» ինդեքսը գնահատելու համար դիտարկվում են կոնկրետ բաժնետիրական ընկերությունում գործադիր տնօրենի կողմից ներդրողների շահերի չարաշահման դեպքերը և ուսումնասիրվում են տվյալ երկրում ներդրողի շահերի օրենսդրական վիճարկման կոնկրետ դեպքեր: Ընդ որում՝ դեպքերը և ձեռնարկությունները ընտրվում են այնպես, որ հնարավորինս ներկայացուցչական լինեն տվյալ ոլորտի համար: Գնահատման այս մեթոդը ապահովում է համադրելիությունը երկրների միջև, քանի որ հարցումների ընտրանքը համասեռ է:

«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը» ինդեքսի գնահատման **մեթոդաբանության առավելություններն** են՝ թափանցիկությունը, ընտրանքի ներկայացուցչականությունը և համադրելիությունը: Սակայն այս մեթոդաբանությունը ունի նաև **որոշ սահմանափակումներ**, որոնք են. ա) ընտրանքի մեջ ներառվում են երկրի ամենամարդաշատ քաղաքի ձեռնարկությունները, հետևաբար արդյունքները կարող են ներկայացուցչական չլինել երկրի այլ շրջանների համար, բ) տվյալները հիմնականում վերաբերում են որոշակի թվով աշխատողներ ունեցող սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին, գ)ստանդարտ դեպքերով նկարագրվող գործարքներն ուղղված են որոշակի, առանձնահատուկ հարցերի լուծմանը, այդ պատճառով էլ կարող են չներկայացնել բիզնեսի առջև ծառացած բոլոր հիմնախնդիրները, դ) գործընթացները իրականացնելու համար անհրաժեշտ ժամանակի տևողությունը նշելիս՝ ժամկետները օրենսդրորեն սահմանված չլինելու դեպքում կիրառվում է փորձագետի սուբյեկտիվ գնահատականը, ե) ենթադրվում է, որ ձեռնարկությունը տիրապետում է բիզնես միջավայրում գործունեություն իրականացնելու համար պահանջվող լրիվ տեղեկատվությանը:

«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը» ինդեքսը իր շրջանակներով սահմանափակ է և չի գնահատվում գործարար միջավայրի բոլոր կողմերը, որոնք կարևորվում են ընկերությունների և ներդրողների համար: Օրինակ, այն չի ներառում տնտեսության հասանելիությունը խոշոր շուկաներին, ենթակառույցների (բացի՝ սահմանային առևտուրն ու էլեկտրականության հասանելիությունը) որակը, երկրի ֆինանսական համակարգի դիմակայման ունակությունը, սեփականության անվտանգությունը գողություններից և կողոպուտից, մակրոտնտեսական իրավիճակը կամ երկրում գործող հաստատությունների որակը:

<u>Հայաստանի գնահատականները</u>[1]. Հայաստանի ինդեքսը Համաշխարհային բանկի կողմից գնահատվում է 2004 թվականից, և այս ողջ ընթացքում գործարար միջավայրի կարգավորման ոլորտում գրանցվել են 25 բարեփոխումներ: Մասնավորապես՝ ***գործարարություն սկսելու ոլորտում***

[1] http://www.doingbusiness.org/~/media/giawb/doing%20business/documents/profiles/country/ARM.pdf:

գրանցվել է 3 բարեփոխում, որոնք արձանագրվել են ««**Գործարարությամբ զբաղվելու դյուրինություն» (DB)** 2007թ., 2010թ. և 2012թ. հետազոտություններում), ***շինարարական թույլտվություններ ստանալու ոլորտում*** 3 բարեփոխում (DB-2007թ., DB-2010թ. և DB-2012թ.), ***էլեկտրականության հասանելիության*** ոլորտում 1 բարեփոխում (DB-2013թ.), ***աշխատողներ վարձելու ոլորտում*** 1 բարեփոխում (DB-2006թ.), ***սեփականության գրանցման ոլորտում*** 1 բարեփոխում (DB-2007թ.), ***վարկեր ստանալու ոլորտում*** 6 բարեփոխում (DB-2005թ., DB-2006թ., DB-2007թ., DB-2008թ., DB-2010թ. և DB-2012թ.), ***հարկերի վճարման ոլորտում*** 1 բարեփոխում (DB-2012թ.) ***սահմանային առևտրի ոլորտում*** 3 բարեփոխում (DB-2008թ., DB-2010թ. և DB-2011թ.), ***ներդրողների պաշտպանվածության ոլորտում*** 1 բարեփոխում (DB-2013թ.), ***պայմանագրերի կիրարկման ոլորտում*** 2 բարեփոխում (DB-2005թ. և DB-2009թ.), ***անվճարունակության պատճառով լուծարման ոլորտում*** 3 բարեփոխում (DB-2005թ., DB-2008թ. և DB-2012թ.):

2013թ. ***«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը» ինդեքսով*** նախորդ տարվա համեմատ Հայաստանի դիրքը **<u>բարելավվել է</u>** 18 տեղով[2], որը պայմանավորվել է ***շինարարական թույլտվություններ ստանալու*** (3 տեղով), ***էլեկտրականության հասանելիությունը*** (42 տեղով), ***ներդրողների պաշտպանվածությունը*** (73 տեղով) ***և հարկերի վճարման*** (44 տեղով) ոլորտները գնահատող ենթաինդեքսների բարելավմամբ (տե՛ս աղյուսակ 2): Միևնույն ժամանակ, նախորդ տարվա համեմատ Հայաստանի դիրքը **<u>վատացել է</u>** ***գործարարություն սկսելու*** (1 տեղով), ***վարկերի ստացումը*** (2 տեղով) և ***սահմանային առևտրի դյուրինությունը*** (3 տեղով) ոլորտներում: ***Սեփականության գրանցումը, պայմանագրերի կիրարկումը*** և ***անվճարունակության պատճառով լուծարումը*** ոլորտներում փոփոխություն չի գրանցվել:

Ներկայացնենք վերոնշյալ ենթաինդեքսներից յուրաքանչյուրի փոփոխությունը և դրա պատճառները:

Գործարարություն սկսելը (գրանցելը) ենթաինդեքսի գծով Հայաստանը արձանագրել է 1 տեղով հետընթաց՝ նախորդ տարում արձանագրված զգալի՝ 10 տեղով առաջընթացից հետո[3]: Բանն այն է, որ դիտարկված ժամանակահատվածում Հայաստանում կրճատվել է (բարելավվել է) գործարարություն սկսելու (գրանցելու) վրա կատարվող ծախսը և, հետևաբար, Հայաստանի դիրքը պիտի բարելավվեր: Սակայն այլ երկրների ավելի արագ տեղաշարժերի, մասնավորապես Հոնկոնգում և Իռլանդիայում գործարարության մեկնարկը դյուրինացնելու նպատակով

[2] ***«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2012»*** հրապարակված հետազոտության մեջ Հայաստանը աշխարհի 183 երկրների թվում գրավում էր 55-րդ տեղը: Սակայն երկրների տվյալների համալրման և ճշգրտման, ինչպես նաև հետազոտության մեջ երկու նոր երկրների (Բարբադոս, Մալթա) ավելացման արդյունքում Հայաստանի **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինություն-2012»** ինդեքսը և ենթաինդեքսները վերագնահատվել են և ստացվել է, որ նախորդ տարի Հայաստանը 183 երկրների թվում գրավել է 50-րդ տեղը:

[3] 2010թ.հունիս-2011թ. հունիս ժամանակահատվածում Հայաստանում ներդրվեց «մեկ պատուհանի» համակարգը, ինչպես նաև սկսեցին կիրառվել ընկերությունների առցանց (online) գրանցումը, որի արդյունքում կրճատվեցին գործարարություն սկսելու համար անհրաժեշտ գործընթացների քանակը և դրա վրա ծախսվող օրերի թիվը:

իրականացված էական բարեփոխումների արդյունքում Հայաստանը նախորդ տարվա 10-րդ տեղի համեմատ ներկայումս զբաղեցնում է 11-րդ տեղը աշխարհի 185 երկրների թվում (տե՛ս աղյուսակ 1, 3, 5):

Շինարարական թույլտվություններ ստանալու ենթաինդեքսի գծով Հայաստանը արձանագրել է 3 տեղով առաջընթաց՝ նախորդ տարվա 49-րդ տեղի փոխարեն ներկայումս գրավում է 46-րդ տեղը: Այս առաջընթացը պայմանավորված է այն հանգամանքով, որ երկրում ներդրվել է շինարարության թույլտվություն ստանալու գործընթացի քարտեզագրում, իրականացվել են միջոցառումներ՝ Երևանի քաղաքապետարանում այդ գործընթացի «մեկ պատուհանի» համակարգի ներդրման ուղղությամբ, վերացվել է օրենսդրությամբ չնախատեսված գումարների գանձման պրակտիկան, ինչպես նաև փոքր շինությունների համար բնապահպանական փորձաքննություն իրականացնելու պահանջը: Սա հանգեցրել է շինարարական թույլտվություններ ստանալու համար անհրաժեշտ ընթացակարգերի, ժամանակի և ծախսի կրճատմանը (տե՛ս աղյուսակ 1, 3): Այս ենթաինդեքսի գծով աշխարհի 185 երկրների թվում Հայաստանը 46-րդ տեղը կիսում է Սլովակիայի հետ:

Էլեկտրականության հասանելիությունը ենթաինդեքսի գծով Հայաստանը արձանագրել է զգալի՝ 42 տեղով առաջընթաց՝ նախորդ տարվա 143-րդ տեղի փոխարեն ներկայումս գրավում է 101-րդ տեղը: Այս ենթաինդեքսի գնահատման համար հաշվի է առնվում այն ընթացակարգերի քանակը, ժամանակը և ծախսը, որոնք ընկերություններին անհրաժեշտ են իրենց հաստատությունը էլեկտրացանցին միացնելու և մշտական էլեկտրականություն ունենալու համար: Այս ենթաինդեքսի գծով Հայաստանի առաջընթացը պայմանավորված է նրանով, որ նախորդ տարվա համեմատ ոչ միայն պարզեցվել են էլեկտրականության հասանելիության ընթացակարգերը, այլև նվազեցվել են միացման վճարները: Հայաստանի Հանրային ծառայությունների կարգավորման հանձնաժողովի որոշմամբ էլեկտրացանցից օգտվելու համար սպառողները այլևս ստիպված չեն լինում սպասել Էներգետիկայի պետական տեսչության թույլտվությանը: Բացի այդ, հանձնաժողովը վերանայել է միացման վճարների կառուցվածքը՝ կրճատելով էլեկտրացանցին միանալու սպառողների ծախսը 150.5%-ով: Այս ենթաինդեքսի գծով աշխարհի 185 երկրների թվում Հայաստանը 101-րդ տեղը կիսում է Մակեդոնիայի հետ:

Սեփականության գրանցումը ենթաինդեքսի գծով Հայաստանի դիրքը չի փոխվել. ինչպես և նախորդ տարի, այս տարի էլ Հայաստանը աշխարհի 185 երկրների թվում առաջին տասնյակում է և գրավում է 4-րդ տեղը: Սակայն հարկ է նկատել, որ այս ուղղությամբ բարեփոխումները Հայաստանում շարունակվում են: Մասնավորապես, 2012թ. հունիսի 1-ի դրությամբ սեփականության գրանցման ծախսը, որը հաշվարկվում է որպես սեփականության արժեքից տոկոս, 0.1%-ով նվազել է (տե՛ս աղյուսակ 3):

Վարկի ստացումը ենթաինդեքսի գծով Հայաստանը արձանագրել է 2 տեղով հետընթաց և նախորդ տարվա 38-րդ տեղի փոխարեն ներկայումս գրավում է 40-րդ տեղը: Նախորդ տարվա համեմատ այս ենթաինդեքսի հիմքում ընկած ցուցանիշներից մասնավոր բյուրոների ծածկույթը ավելացել է 9.4%-ով, վարկային տեղեկատվության խորության և օրենսդրական իրավունքի ամրության ինդեքսները չեն փոխվել, նվազել է միայն պետական ռեգիստրի ծածկույթը՝ 3.2%-ով, որը, սակայն, մեր կարծիքով, չէր կարող բերել 2 տեղով հետընթացի: Ավելի շուտ, այս ենթաինդեքսի հետընթացը բացատրվում է մյուս երկրներում առաջընթաց բարեփոխումներով (տե՛ս աղյուսակ 1, 3, 5): Այս ենթաինդեքսի գծով Հայաստանը 40-րդ տեղը կիսում է աշխարհի այլ 8 երկրների՝ Ֆինլանդիայի, Իսլանդիայի, Շվեդիայի, Բուլղարիայի, Էստոնիայի, Սերբիայի, Ուգանդայի և Վիետնամի հետ:

Ներդրողների պաշտպանվածությունը ենթաինդեքսի գծով Հայաստանը գրանցել է կտրուկ առաջընթաց 73 տեղով, որը պայմանավորվել է այս ոլորտում իրականացված էական բարեփոխումներով: Մասնավորապես, Հայաստանում ներդրվել է պահանջ, որի համաձայն բաժնետերերը պետք է հավանություն տան փոխկապակցված անձանց վերաբերող գործարքներին, այսպիսի գործարքները առավել հանգամանորեն պիտի բացահայտվեն (ներկայացվեն) տարեկան հաշվետվություններում: Բացի այդ, ավելի դյուրին է դարձել դատական կարգով ընկերությունների ղեկավար անձանց (տնօրենների) հետապնդումը, երբ փոխկապակցված անձանց վերաբերող գործարքները վնասի են հանգեցնում: Արդյունքում, Հայաստանում բարելավվել են ներդրողների պաշտպանվածության ենթաինդեքսի հիմքում ընկած **թափանցիկության չափի**, **տնօրենի պատասխանատվության չափի** և **ներդրողների պաշտպանության** ինդեքսները (տե՛ս աղյուսակ 1, 3, 5): Աշխարհի 185 երկրների թվում ***ներդրողների պաշտպանվածության*** ենթաինդեքսով Հայաստանը 25-րդ տեղը կիսում է աշխարհի այլ 6 երկրների՝ Նորվեգիայի, Ադրբեջանի, Տաջիկստանի, Բանգլադեշի, Մոնղոլիայի և Տրինիդադ-Տոբագոյի հետ:

Հարկերի վճարում ենթաինդեքսի գծով Հայաստանը գրանցել է առաջընթաց 44 տեղով և նախորդ տարվա 152-րդ տեղի փոխարեն ներկայումս գրավում է 108-րդ տեղը: Դրան նպաստել են հարկերի վճարումների տարեկան թվի և այդ վճարումների վրա ծախսվող ժամանակի էական կրճատումները՝ համապատասխանաբար 19 վճարումով և 120 ժամով (տե՛ս աղյուսակ 3):

Սահմանային առևտրի դյուրինությունը ենթաինդեքսի գծով Հայաստանի դիրքը վատացել է 1-ով՝ նախորդ տարվա 106-րդ տեղի փոխարեն Հայաստանը ներկայումս գրավում է 107-րդ տեղը: Այս ենթաինդեքսի հիմքում ընկած ցուցանիշներից և՛ ոչ մեկը փոփոխության չի ենթարկվել, հետևաբար, կարելի է նշել, որ սահմանային առևտրի դյուրինություն ենթաինդեքսի գծով Հայաստանի դիրքի 1 տեղով վատացումը ամենևին էլ պայմանավորված չէ այս ոլորտում երկրի հետընթացով, այլ մյուս երկրներում առաջընթաց բարեփոխումների արդյունք է:

Պայմանագրերի կիրարկում ենթաինդեքսի գծով Հայաստանի դիրքը չի փոխվել. ինչպես և նախորդ տարի, Հայաստանը ներկայումս գրավում է 91-րդ տեղը: Փոփոխության չեն ենթարկվել նաև այս ենթաինդեքսի հիմքում ընկած ցուցանիշները:

Անվճարունակության պատճառով լուծարում (նախկինում՝ ***գործարարության փակում)*** ենթաինդեքսի գծով Հայաստանի դիրքը նույնպես չի փոխվել. ինչպես և նախորդ տարի, Հայաստանը ներկայումս գրավում է 63-րդ տեղը: Անվճարունակության պատճառով լուծարման համար պահանջվող ժամանակը և ծախսը (հաշվարկված որպես գույքի արժեքից տոկոս) չեն փոխվել, սակայն 0.9 ցենտով ավելացել է սնանկության գործընթացի արդյունքում մարված պարտքերի (փոխհատուցման) չափը, որը կարող էր բերել երկրի դիրքի բարելավման: Հետևաբար, այս ենթաինդեքսի անփոփոխ մնալը կարելի է բացատրել Հայաստանի համեմատ այլ երկրների ավելի ակտիվ բարեփոխումներով:

Այսպիսով, ընդհանրացնելով ենթաինդեքսների շարժերի արդյունքները, կարելի է փաստել, որ նախորդ տարվա համեմատ **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը-2013»** ինդեքսի հիմքում ընկած տասը ենթաինդեքսներից՝

- ***շինարարական թույլտվությունների ստացումը, էլեկտրականության հասանելիությունը, ներդրողների պաշտպանվածությունը և հարկերի վճարումը*** ենթաինդեքսները զգալիորեն բարելավվել են շնորհիվ այդ ոլորտում իրականացված լայնածավալ բարեփոխումների,
- ***գործարարություն սկսելը, վարկերի ստացումը*** և ***սահմանային առևտրի դյուրինությունը*** ենթաինդեքսները վատացել են պայմանավորված ոչ թե Հայաստանում այդ ոլորտների հետընթացով, այլ Հայաստանի համեմատ աշխարհի մյուս երկրների ավելի արագ առաջընթացով,
- ***սեփականության գրանցումը, պայմանագրի կիրարկումը*** և ***անվճարունակության պատճառով լուծարումը*** ենթաինդեքսները մնացել են անփոփոխ:

<u>Հայաստանը տարածաշրջանային համապատկերում</u>. **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը-2013»** հետազոտության մեջ ենթաինդեքսների գնահատման մեթոդաբանության ուսումնասիրման, ինչպես նաև աղյուսակներ 2 և 3-ում ներկայացված Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի 2013թ. ինդեքսների համեմատական վերլուծության արդյունքում նկատում ենք, որ Հայաստանը.

- գերազանցում է իր հարևան երկրներին **«Անվճարունակության պատճառով լուծարում»** ոլորտում,
- զիջում է իր հարևան երկու երկրներին **«Հարկերի վճարումը»** և **«Պայմանագրերի կիրարկումը»** ոլորտներում,

- զիջում է միայն Վրաստանին **«Գործարարություն սկսելը (գրանցելը)», «Շինարարական թույլտվություններ ստանալը»**, **«Էլեկտրականության հասանելիությունը», «Սեփականության գրանցումը», «Վարկի ստացումը», «Ներդրողների պաշտպանվածությունը»** և **«Սահմանային առևտրի դյուրինությունը»** ոլորտներում:

Հարավկովկասյան տարածաշրջանի տեսակետից հարկ ենք համարում քննարկել ***հարկերի վճարումը*** և ***պայմանագրերի կիրարկումը*** ենթաինդեքսները, որոնցով Հայաստանը զիջում է իր հարևան երկու երկրներին էլ (տե՛ս աղյուսակ 3):

Հարկերի վճարումը ենթաինդեքսով Հայաստանը զբաղեցնում է 108-րդ տեղը՝ աշխարհի 185 երկրների թվում և զգալիորեն զիջում է թե՛ Վրաստանին (75 տեղով) և թե՛ Ադրբեջանին (32 տեղով): Այս ենթաինդեքսի գծով հարավ-կովկասյան երեք երկրներն էլ նախորդ տարվա համեմատ գրանցել են առաջընթաց, սակայն Հայաստանի դիրքը բարելավվել է 44 տեղով, Վրաստանինը՝ 12 տեղով, Ադրբեջանինը՝ 3 տեղով: Հարկ է նկատել, որ եթե նախորդ տարվա համեմատ Վրաստանում և Ադրբեջանում կրճատվել է միայն հարկերի վճարման վրա ծախսվող ժամանակը՝ համապատասխանաբար 107 ժամով և 11 ժամով, ապա Հայաստանում կրճատվել է ինչպես հարկերի տարեկան վճարումների թիվը (21-ով), այնպես էլ դրա վրա ծախսվող ժամանակը (120 ժամով): Չնայած այս բարեփոխումներին, ներկայումս Հայաստանում ձեռներեցները կատարում են հարկերի տարեկան 13 վճարում (Վրաստանում՝ 5, Ադրբեջանում՝ 18)՝ ծախսելով 380 ժամ (Վրաստանում՝ 280, Ադրբեջանում՝ 214) և վճարում են իրենց համախառն շահույթի 38.8%-ը (Վրաստանում՝ 16.5%, Ադրբեջանում՝ 40.0%):

Պայմանագրերի կիրարկում ենթաինդեքսի գծով Հայաստանի դիրքը նախորդ տարվա համեմատ մնացել է անփոփոխ. Հայաստանը գրավում է 91-րդ տեղը և զգալիորեն զիջում է թե՛ Վրաստանին (61 տեղով) և թե՛ Ադրբեջանին (66 տեղով): Նկատենք, որ եթե պայմանագրի կիրարկման համար Վրաստանում կատարվում է 33 ընթացակարգ և ծախսվում է 285 օր, իսկ Ադրբեջանում՝ 39 ընթացակարգ և 237 օր, ապա Հայաստանում ներկայումս պահանջվում է իրականացնել 49 ընթացակարգ և ծախսվում է 440 օր (տե՛ս աղյուսակ 1)[4]: Սակայն, ի տարբերություն Վրաստանի, որտեղ պայմանագրի կիրարկման ծախսը բավականին բարձր է և կազմում է դատական պահանջի 29.9%-ը, Հայաստանում այն ցածր է և կազմում է պահանջի 19.0%-ը՝ գրեթե հավասար Ադրբեջանում իրականացվող ծախսին (18.5%):

Ինչ վերաբերում է Հայաստանի հարևան մյուս երկու երկրների՝ Թուրքիայի և Իրանի հետ Հայաստանի համեմատությանը, նկատենք, որ Հայաստանը գերազանցում է երկու երկրին էլ **«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2013»** ինդեքսով. աշխարհի 185 երկրների

[4] Նկատենք, որ 2010թ.հունիս-2011թ. հունիս ժամանակահատվածում Հայաստանում 175 օրով ավելացել է գործի հետաքննության և դատական պրոցեսի վրա ծախսվող ժամանակը և 20 օրով նվազել է դատական հայցի լրացման և ներկայացման ժամանակը:

շարքում Թուրքիան գրավում է 71-րդ տեղը, իսկ Իրանը՝ 145-րդ տեղը (տե՛ս աղյուսակներ 4 և 5): Այս ինդեքսի հիմքում ընկած առանձին ենթաինդեքսների գծով պատկերը հետևյալն է՝

- Հայաստանը գերազանցում է Թուրքիային և Իրանին **«Գործարարություն սկսելը (գրանցելը)», «Շինարարական թույլտվություններ ստանալը»**, **«Սեփականության գրանցումը», «Վարկի ստացումը», «Ներդրողների պաշտպանվածությունը»** և **«Անվճարունակության պատճառով լուծարումը»** ոլորտներում,
- Հայաստանը զիջում է Թուրքիային և Իրանին **«Պայմանագրերի կիրարկումը»** ոլորտում**,**
- Հայաստանը զիջում է միայն Թուրքիային **«Էլեկտրականության հասանելիությունը», «Հարկերի վճարումը»** և **«Սահմանային առևտրի դյուրինությունը»** ոլորտներում:

Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների շարքում գործարարությամբ զբաղվելու դյուրինությամբ Հայաստանը զիջում է Մակեդոնիային, իսկ նախկին խորհրդային երկրների շարքում՝ Վրաստանին և մերձբալթյան երկրներին (տե՛ս աղյուսակ 4):

Հայաստանի 2004-2013թթ. ամփոփ ինդեքսների, ենթաինդեքսների և դրանց հիմքում ընկած ցուցանիշների դինամիկան, ինչպես նաև նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում, ինչպես նաև Թուրքիայում և Իրանում գործարարությամբ զբաղվելու դյուրինության համեմատական նկարագիրը ներկայացված են 1-5 աղյուսակներում:

Հայաստանի «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2013» ինդեքսի առանձին ցուցանիշների համեմատությունը (2004-2013 թթ.)[5]

Աղյուսակ 1

Տնտեսություն		Հայաստան									
Տարի		*2013*	*2012*	*2011*	*2010*	*2009*	*2008*	*2007*	2006	*2005*	*2004*
Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը	Երկրների թիվը	185	183	183	183	181	178	175	155	145	145
	Երկրի դիրքը	32	50	...	...	...	...	...	...	...	...
Գործարարություն սկսելը (գրանցելը)	Տեղը	11	10	...	...	...	...	...	...	...	...
	Ընթացակարգեր (քանակ)	3	3	5	5	8	8	8	9	9	9
	Ժամանակ (օրեր)	8	8	14	14	17	17	17	18	18	18
	Ծախս (1 շնչի հաշվով եկամտի %)	2.5	2.9	3.1	2.6	3.6	4.8	5.1	6.1	7	8.4
	Նվազագույն կապիտալ (1 շնչի հաշվով եկամտի %)	0	0	0	0	2.3	3.1	3.3	4	4.5	5.4
Շինարարական թույլտվություններ ստանալը	Տեղը	46	49	...	...	...	...	...	...	...	...
	Ընթացակարգեր (քանակ)	17	17	18	18	18	18	18	20	...	...
	Ժամանակ (օրեր)	77	77	136	136	148	148	148	183	...	...
	Ծախս (1 շնչի հաշվով եկամտի %)	50.1	57.1	122.4	104.7	112.8	151.7	562.8	544.5	...	...
Էլեկտրականության հասանելիությունը	Տեղը	101	143	...	...	...	...	...	...	...	...
	Ընթացակարգեր (քանակ)	5	6	...	...	...	...	...	...	...	...
	Ժամանակ (օրեր)	242	242	...	...	...	...	...	...	...	...
	Ծախս (1 շնչի հաշվով եկամտի %)	107.3	257.8	...	...	...	...	...	...	...	...
Սեփականության գրանցումը	Տեղը	4	4	...	...	...	...	...	...	...	...
	Ընթացակարգեր (քանակ)	3	3	3	3	3	3	3	4	4	...
	Ժամանակ (օրեր)	7	7	7	4	4	4	4	6	6	...
	Ծախս (սեփականության արժեքի %)	0.2	0.3	0.3	0.3	0.3	0.4	0.4	0.5	0.6	...
Վարկի ստացումը	Տեղը	40	38	...	...	...	...	...	...	...	....
	Օրինական իրավունքների ինդեքսի ամրություն (0-10)	6	6	6	6	6	6	6	5	5	...
	Վարկային տեղեկատվության ինդեքսի խորություն (0-6)	6	6	5	5	5	5	3	3	0	...

[5] http://www.doingbusiness.org/~/media/giawb/doing%20business/documents/profiles/country/ARM.pdf:

	Պետական ռեգիստրի ծածկույթ (տոկոս՝ չափահաս բնակչությունից)	20.5	23.7	16.9	4.4	2.6	2.8	1.5	2.6	n/a...	...
	Մասնավոր բյուրոյի ծածկույթ (տոկոս՝ չափահաս բնակչությունից)	56.0	46.6	38.3	34.5	24.4	13.5	0	0	0	...
Ներդրողների պաշտպանվածությունը	**Տեղը**	**25**	**98**	**...**	**...**	**...**	**...**	**...**	**...**	**...**	**...**
	Թափանցիկության չափի ինդեքս (0-10)	6	5	5	5	5	5	5	5	...	...
	Տնօրենի պատասխանատվության չափի ինդեքս (0-10)	6	2	2	2	2	2	2	2	...	...
	Սեփականատերերի դատական հայցերի դյուրինության ինդեքս (0-10)	8	8	8	8	8	8	8	8	...	...
	Ներդրողների պաշտպանության ամրության ինդեքս (0-10)	6.7	5	5	5	5	5	5	5	**...**	**...**
Հարկերի վճարումը	**Տեղը**	**108**	**152**	**...**	**...**	**...**	**...**	**...**	**...**	**...**	**...**
	Վճարումներ (տարեկան՝ թիվ)	13	34	50	50	50	50	50	50	...	...
	Ժամանակ (տարեկան՝ ժամեր)	380	500	581	581	581	581	580	580	...	...
	Շահութահարկ, եկամտահարկ (%)	15.0	16.8	16.6	...	..	..	...	...	...	...
	Սոցապ և կենսաթոշակային վճարումներ (%)	23	23	23	...	..	..	...	...	...	...
	Այլ հարկեր (%)	0.9	0.9	1.1	...	..	..	...	...	...	...
	Ընդհանուր հարկերի դրույքաչափ (շահույթի տոկոս)	38.8	38.8	38.6	38.6	38.6	38.6	36.6	36.6	...	...
Սահմանային առևտրի դյուրինությունը	**Տեղը**	**107**	**106**	**...**	**...**	**...**	**...**	**...**	**...**	**...**	**...**
	Արտահանման համար անհրաժեշտ փաստաթղթեր (քանակ)	5	5	5	7	6	6	6	6	...	...
	Արտահանման համար անհրաժեշտ ժամանակ (օրեր)	13	13	13	17	30	30	34	34	...	...
	Արտահանման ծախս (ԱՄՆ դոլար/կոնտեյներ)	1,815	1,815	1,665	1,731	1,746	1,165	1,600	1,600	...	...
	Ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր (քանակ)	8	8	8	9	8	8	6	6	...	...

	Ներմուծման համար անհրաժեշտ ժամանակ (օրեր)	18	18	18	20	24	24	37	37	...	...
	Ներմուծման ծախսը (ԱՄՆ դոլար/կոնտեյներ)	2,195	2,195	2,045	2,096	2,111	1,465	1,880	1,880	...	...
Պայմանագրերի կիրարկումը	**Տեղը**	**91**	**91**	...	...	...	...	...	...	...	...
	Ընթացակարգեր (քանակ)	49	49	49	49	49	50	50	50	50	50
	Ժամանակ (օրեր)	440	440	285	285	285	285	285	285	295	327
	Ծախս (պահանջի տոկոս)	19	19	19	19	19	19	19	19	19	19
Անվճարունակության պատճառով լուծարումը	**Տեղը**	**63**	**63**	...	...	...	...	...	...	...	...
	Ժամանակ (տարիներ)	1.9	1.9	1.9	1.9	1.9	1.9	1.9	1.9	1.9	1.9
	Ծախս (գույքի տոկոս)	4	4	4	4	4	4	4	4	4	4
	Վերականգնման չափը (ցենտ)	41.2	40.3	40.6	41.8	41.8	41.7	41.7	40.7	39.3	39.3

Հարավկովկասյան երկրների «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2013 թ.» ինդեքսի առանձին ենթաինդեքսների համեմատությունը

Աղյուսակ 2

Ո լ ո ր տ ն ե ր	Հայաստան	Վրաստան	Ադրբեջան
Գործարարությամբ զբաղվելու դյուրինություն (դիրքը աշխարհի 185 երկրների շարքում)	32	9	67
Գործարարություն սկսելը (գրանցելը)	11	7	18
Շինարարական թույլտվություններ ստանալը	46	3	177
Էլեկտրականության հասանելիությունը	101	50	175
Սեփականության գրանցումը	4	1	9
Վարկի ստացումը	40	4	53
Ներդրողների պաշտպանվածությունը	25	19	25
Հարկերի վճարումը	108	33	76
Սահմանային առևտրի դյուրինությունը	107	38	169
Պայմանագրերի կիրարկումը	91	30	25
Անվճարունակության պատճառով լուծարումը	63	81	95
1 շնչին բաժին ընկնող ՀԱԱ (2010 թ., ԱՄՆ դոլար)	3,360	2,860	5,290
Բնակչություն (2010 թ., մարդ)	3,100,236	4,486,000	9,168,000

Հարավկովկասյան երկրների «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը» 2012-2013 թթ. ինդեքսների առանձին ցուցանիշների համեմատությունը

Աղյուսակ 3

Տնտեսություն		Հայաստան		Վրաստան		Ադրբեջան	
Տարի		2013	2012	2013	2012	2013	2012
Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը	**Երկրների թիվը**	**185**	**183**	**185**	**183**	**185**	**183**
	Երկրի դիրքը	**32**	**50**	**9**	**12**	**67**	**66**
Գործարարություն սկսելը (գրանցելը)	**Տեղը**	**11**	**10**	**7**	**7**	**18**	**17**
	Ընթացակարգեր (քանակ)	3	3	2	2	6	6
	Ժամանակ (օրեր)	8	8	2	2	8	8
	Ծախս (1 շնչի հաշվով եկամտի %)	2.5	2.9	3.8	4.3	2.3	2.7
	Նվազագույն կապիտալ (1 շնչի հաշվով եկամտի %)	0	0	0	0	0	0
Շինարարական թույլտվություններ ստանալը	**Տեղը**	**46**	**49**	**3**	**3**	**177**	**176**
	Ընթացակարգեր (քանակ)	17	17	9	9	28	28
	Ժամանակ (օրեր)	77	77	74	74	212	212
	Ծախս (1 շնչի հաշվով եկամտի %)	50.1	57.1	17.7	20.2	292.4	335.2
Էլեկտրականության հասանելիությունը	**Տեղը**	**101**	**143**	**50**	**88**	**175**	**175**
	Ընթացակարգեր (քանակ)	5	6	4	5	9	9
	Ժամանակ (օրեր)	242	242	71	96	241	241
	Ծախս (1 շնչի հաշվով եկամտի %)	107.3	257.8	561.8	751.3	591.2	677.6
Սեփականության գրանցումը	**Տեղը**	**4**	**4**	1	1	9	6
	Ընթացակարգեր (քանակ)	3	3	1	1	4	4
	Ժամանակ (օրեր)	7	7	2	2	11	11
	Ծախս (սեփականության արժեքի %)	0.2	0.3	0.1	0.1	0.5	0.2
Վարկի ստացումը	**Տեղը**	**40**	**38**	**4**	**9**	**53**	**52**
	Օրինական իրավունքների ինդեքսի ամրություն (0-10)	6	6	9	8	6	6
	Վարկային տեղեկատվության ինդեքսի խորություն (0-6)	6	6	6	6	5	5
	Պետական ռեգիստրի ծածկույթ (տոկոս՝ չափահաս բնակչությունից)	20.5	23.7	0	0	17.7	15.6
	Մասնավոր բյուրոյի ծածկույթ (տոկոս՝ չափահաս բնակչությունից)	56.0	46.6	35.5	29.6	0	0
Ներդրողների պաշտպանվածություն	**Տեղը**	**25**	**98**	**19**	**17**	**25**	**24**
	Թափանցիկության չափի ինդեքս (0-10)	6	5	9	9	7	7

	Տնօրենի պատասխանատվության չափի ինդեքս (0-10)	6	2	6	6	5	5
	Սեփականատերերի դատական հայցերի դյուրինության ինդեքս (0-10)	8	8	6	6	8	8
	Ներդրողների պաշտպանության ամրության ինդեքս (0-10)	6.7	5	7.0	7.0	6.7	6.7
Հարկերի վճարումը	**Տեղը**	**108**	**152**	**33**	**45**	**76**	**79**
	Վճարումներ (տարեկան՝ թիվ)	13	34	5	5	18	18
	Ժամանակ (տարեկան՝ ժամեր)	380	500	280	387	214	225
	Շահութահարկ, եկամտահարկ (%)	15.0	16.8	14.3	14.3	12.9	12.9
	Սոցապ և կենսաթոշակային վճարումներ (%)	23	23	0	0	24.8	24.8
	Այլ հարկեր (%)	0.9	0.9	2.2	2.2	2.2	2.2
	Ընդհանուր հարկերի դրույքաչափ (շահույթի տոկոս)	38.8	38.8	16.5	16.5	40.0	40.0
Սահմանային առևտրի դյուրինությունը	**Տեղը**	**107**	**106**	**38**	**47**	**169**	**169**
	Արտահանման համար անհրաժեշտ փաստաթղթեր (քանակ)	5	5	4	4	8	8
	Արտահանման համար անհրաժեշտ ժամանակ (օրեր)	13	13	9	10	38	38
	Արտահանման ծախս (ԱՄՆ դոլար/կոնտեյներ)	1,815	1,815	1,355	1,595	3,430	3,345
	Ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթեր (քանակ)	8	8	4	4	10	10
	Ներմուծման համար անհրաժեշտ ժամանակ (օրեր)	18	18	10	11	38	38
	Ներմուծման ծախսը (ԱՄՆ դոլար/կոնտեյներ)	2,195	2,195	1,595	1,715	3,490	3,405
Պայմանագրերի կիրարկումը	**Տեղը**	**91**	**91**	**30**	**39**	**25**	**24**
	Ընթացակարգեր (քանակ)	49	49	33	36	39	39
	Ժամանակ (օրեր)	440	440	285	285	237	237
	Ծախս (պահանջի տոկոս)	19	19	29.9	29.9	18.5	18.5
Անվճարունակու-թյան պատճառով լուծարումը	**Տեղը**	**63**	**63**	**81**	**75**	**95**	**99**
	Ժամանակ (տարիներ)	1.9	1.9	2.0	2.0	2.7	2.7
	Ծախս (գույքի տոկոս)	4	4	4	4	8	8
	Վերականգնման չափը (ցենտ)	41.2	40.3	35.7	37.2	30.6	29.7

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2013» ինդեքսի առանձին ենթաինդեքսների համեմատությունը (դիրքը աշխարհի 185 երկրների շարքում)

Աղյուսակ 4

Երկիրը/ ինդեքսի տեղը	Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը	Գործադարձություն վերը (փոխ ընդհանուր)	Հիմնադրման թեթևությունը	Էլեկտրամատակարարման հասանելիությունը	Սեփականության գրանցումը	Վարկի առացումը	Ներդրողների պաշտպանվածություն	Հարկերի վճարումը	Սահմանային առևտրի դյուրինությունը	Պայմանագրերի կիրառումը	Սնանկության լուծարումը
Վրաստան	9	7	3	50	1	4	19	33	38	30	81
Էստոնիա	21	47	35	52	14	40	70	50	7	31	72
Մակեդոնիա	23	5	65	101	50	23	19	24	76	59	60
Լատվիա	25	59	113	83	31	4	70	52	16	24	33
Լիտվա	27	107	48	75	5	53	70	60	24	14	40
Հայաստան	32	11	46	101	4	40	25	108	107	91	63
Սլովենիա	35	30	61	31	83	104	17	63	57	56	42
Սլովակիա	46	83	46	100	8	23	117	100	98	69	38
Ղազախստան	49	25	155	80	28	83	10	17	182	28	55
Մոնտենեգրո	51	58	176	69	117	4	32	81	42	135	44
Հունգարիա	54	52	55	109	43	53	128	118	73	16	70
Լեհաստան	55	124	161	137	62	4	49	114	50	56	37
Բելառուս	58	9	30	171	3	104	82	129	151	13	56
Չեխիա	65	140	74	143	27	53	100	120	68	79	34
Բուլղարիա	66	57	123	128	68	40	49	91	93	86	93
Ադրբեջան	67	18	177	175	9	53	25	76	169	25	95
Ղրղզստան	70	15	67	177	11	12	13	168	174	47	155
Թուրքիա	71	72	142	68	42	83	70	80	78	40	124
Ռումինիա	72	68	129	168	72	12	49	136	72	60	102
Մոլդովա	83	92	168	161	16	40	82	109	142	26	91
Խորվաթիա	84	80	143	56	104	40	139	42	105	52	97
Ալբանիա	85	62	185	154	121	23	17	160	79	85	66
Սերբիա	86	42	179	76	41	40	82	149	94	103	103
Կոսովո	98	126	144	116	76	23	100	44	124	138	87
Ռուսաստան	112	101	178	184	46	104	117	64	162	11	53
Բոսնիա-Հերց.	126	162	163	158	93	70	100	128	103	120	83
Ուկրաինա	137	50	183	166	149	23	117	165	145	42	157
Տաջիկստան	141	77	180	181	82	180	25	175	184	43	79
Իրան	145	87	166	163	165	83	150	129	143	53	126
Ուզբեկստան	154	90	152	167	138	154	139	161	185	46	73

Նախկին ԽՍՀՄ, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների դիրքը աշխարհի 185 երկրների շարքում «Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը 2013» ինդեքսով՝ ըստ առանձին ենթաինդեքսների և երկրների հաջորդականության

Աղյուսակ 5

Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը		Գործարարություն սկսելը (գրանցվելը)		Շինարարական թույլտվությունների ստացումը		Էլեկտրականության հասանելիությունը	
Վրաստան	9	Մակեդոնիա	5	Վրաստան	3	Սլովենիա	31
Էստոնիա	21	Վրաստան	7	Բելառուս	30	Վրաստան	50
Մակեդոնիա	23	Բելառուս	9	Էստոնիա	35	Էստոնիա	52
Լատվիա	25	Հայաստան	11	Հայաստան	46	Խորվաթիա	56
Լիտվա	27	Ղրղզստան	15	Սլովակիա	46	Թուրքիա	68
Հայաստան	32	Ադրբեջան	18	Լիտվա	48	Մոնտենեգրո	69
Սլովենիա	35	Ղազախստան	25	Հունգարիա	55	Լիտվա	75
Սլովակիա	46	Սլովենիա	30	Սլովենիա	61	Սերբիա	76
Ղազախստան	49	Սերբիա	42	Մակեդոնիա	65	Ղազախստան	80
Մոնտենեգրո	51	Էստոնիա	47	Ղրղզստան	67	Լատվիա	83
Հունգարիա	54	Ուկրաինա	50	Չեխիա	74	Սլովակիա	100
Լեհաստան	55	Հունգարիա	52	Լատվիա	113	Մակեդոնիա	101
Բելառուս	58	Բուլղարիա	57	Բուլղարիա	123	Հայաստան	101
Չեխիա	65	Մոնտենեգրո	58	Ռումինիա	129	Հունգարիա	109
Բուլղարիա	66	Լատվիա	59	Թուրքիա	142	Կոսովո	116
Ադրբեջան	67	Ալբանիա	62	Խորվաթիա	143	Բուլղարիա	128
Ղրղզստան	70	Ռումինիա	68	Կոսովո	144	Լեհաստան	137
Թուրքիա	71	Թուրքիա	72	Ուզբեկստան	152	Չեխիա	143
Ռումինիա	72	Տաջիկստան	77	Ղազախստան	155	Ալբանիա	154
Մոլդովա	83	Խորվաթիա	80	Լեհաստան	161	Բոսնիա-Հերց.	158
Խորվաթիա	84	Սլովակիա	83	Բոսնիա-Հերց.	163	Մոլդովա	161
Ալբանիա	85	Իրան	87	Իրան	166	Իրան	163
Սերբիա	86	Ուզբեկստան	90	Մոլդովա	168	Ուկրաինա	166
Կոսովո	98	Մոլդովա	92	Մոնտենեգրո	176	Ուզբեկստան	167
Ռուսաստան	112	Ռուսաստան	101	Ադրբեջան	177	Ռումինիա	168
Բոսնիա-Հերց.	126	Լիտվա	107	Ռուսաստան	178	Բելառուս	171
Ուկրաինա	137	Լեհաստան	124	Սերբիա	179	Ադրբեջան	175
Տաջիկստան	141	Կոսովո	126	Տաջիկստան	180	Ղրղզստան	177
Իրան	145	Չեխիա	140	Ուկրաինա	183	Տաջիկստան	181
Ուզբեկստան	154	Բոսնիա-Հերց.	162	Ալբանիա	185	Ռուսաստան	184

Սեփականության գրանցումը	
Վրաստան	1
Բելառուս	3
Հայաստան	4
Լիտվա	5
Սլովակիա	8
Ադրբեջան	9
Ղրղզստան	11
Էստոնիա	14
Մոլդովա	16
Չեխիա	27
Ղազախստան	28
Լատվիա	31
Սերբիա	41
Թուրքիա	42
Հունգարիա	43
Ռուսաստան	46
Մակեդոնիա	50
Լեհաստան	62
Բուլղարիա	68
Ռումինիա	72
Կոսովո	76
Տաջիկստան	82
Սլովենիա	83
Բոսնիա-Հերց.	93
Խորվաթիա	104
Մոնտենեգրո	117
Ալբանիա	121
Ուզբեկստան	138
Ուկրաինա	149
Իրան	165

Վարկի ստացումը	
Վրաստան	4
Լատվիա	4
Մոնտենեգրո	4
Լեհաստան	4
Ղրղզստան	12
Ռումինիա	12
Մակեդոնիա	23
Սլովակիա	23
Ալբանիա	23
Կոսովո	23
Ուկրաինա	23
Էստոնիա	40
Հայաստան	40
Բուլղարիա	40
Մոլդովա	40
Խորվաթիա	40
Սերբիա	40
Լիտվա	53
Հունգարիա	53
Չեխիա	53
Ադրբեջան	53
Բոսնիա-Հերց.	70
Ղազախստան	83
Թուրքիա	83
Իրան	83
Սլովենիա	104
Բելառուս	104
Ռուսաստան	104
Ուզբեկստան	154
Տաջիկստան	180

Ներդրողների պաշտպանվածությունը	
Ղազախստան	10
Ղրղզստան	13
Սլովենիա	17
Ալբանիա	17
Վրաստան	19
Մակեդոնիա	19
Հայաստան	25
Ադրբեջան	25
Տաջիկստան	25
Մոնտենեգրո	32
Լեհաստան	49
Բուլղարիա	49
Ռումինիա	49
Էստոնիա	70
Լատվիա	70
Լիտվա	70
Թուրքիա	70
Բելառուս	82
Մոլդովա	82
Սերբիա	82
Չեխիա	100
Կոսովո	100
Բոսնիա-Հերց.	100
Սլովակիա	117
Ռուսաստան	117
Ուկրաինա	117
Հունգարիա	128
Խորվաթիա	139
Ուզբեկստան	139
Իրան	150

Հարկերի վճարումը	
Ղազախստան	17
Մակեդոնիա	24
Վրաստան	33
Խորվաթիա	42
Կոսովո	44
Էստոնիա	50
Լատվիա	52
Լիտվա	60
Սլովենիա	63
Ռուսաստան	64
Ադրբեջան	76
Թուրքիա	80
Մոնտենեգրո	81
Բուլղարիա	91
Սլովակիա	100
Հայաստան	108
Մոլդովա	109
Լեհաստան	114
Հունգարիա	118
Չեխիա	120
Բոսնիա-Հերց.	128
Բելառուս	129
Իրան	129
Ռումինիա	136
Սերբիա	149
Ալբանիա	160
Ուզբեկստան	161
Ուկրաինա	165
Ղրղզստան	168
Տաջիկստան	175

Սահմանային առևտրի դյուրինությունը	
Էստոնիա	7
Լատվիա	16
Լիտվա	24
Վրաստան	38
Մոնտենեգրո	42
Լեհաստան	50
Սլովենիա	57
Չեխիա	68
Ռումինիա	72
Հունգարիա	73
Մակեդոնիա	76
Թուրքիա	78
Ալբանիա	79
Բուլղարիա	93
Սերբիա	94
Սլովակիա	98
Բոսնիա-Հերց.	103
Խորվաթիա	105
Հայաստան	107
Կոսովո	124
Մոլդովա	142
Իրան	143
Ուկրաինա	145
Բելառուս	151
Ռուսաստան	162
Ադրբեջան	169
Ղրղզստան	174
Ղազախստան	182
Տաջիկստան	184
Ուզբեկստան	185

Պայմանագրերի կիրարկումը	
Ռուսաստան	11
Բելառուս	13
Լիտվա	14
Հունգարիա	16
Լատվիա	24
Ադրբեջան	25
Մոլդովա	26
Ղազախստան	28
Վրաստան	30
Էստոնիա	31
Թուրքիա	40
Ուկրաինա	42
Տաջիկստան	43
Ուզբեկստան	46
Ղրղզստան	47
Խորվաթիա	52
Իրան	53
Սլովենիա	56
Լեհաստան	56
Մակեդոնիա	59
Ռումինիա	60
Սլովակիա	69
Չեխիա	79
Ալբանիա	85
Բուլղարիա	86
Հայաստան	91
Սերբիա	103
Բոսնիա-Հերց.	120
Մոնտենեգրո	135
Կոսովո	138

Անվճարունակության պատճառով լուծարումը	
Լատվիա	33
Չեխիա	34
Լեհաստան	37
Սլովակիա	38
Լիտվա	40
Սլովենիա	42
Մոնտենեգրո	44
Ռուսաստան	53
Ղազախստան	55
Բելառուս	56
Մակեդոնիա	60
Հայաստան	63
Ալբանիա	66
Հունգարիա	70
Էստոնիա	72
Ուզբեկստան	73
Տաջիկստան	79
Վրաստան	81
Բոսնիա-Հերց.	83
Կոսովո	87
Մոլդովա	91
Բուլղարիա	93
Ադրբեջան	95
Խորվաթիա	97
Ռումինիա	102
Սերբիա	103
Թուրքիա	124
Իրան	126
Ղրղզստան	155
Ուկրաինա	157